«Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ
Հր.Ներսիսյան 7
Հեռ. (010) 20-70-07
info@kzmc.am

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"Kanaker-Zeytun" MC
Hr. Nersisyan 7
Tel. (010) 20-70-07
info@kzmc.am

«ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ
տնօրեն Ա. Շահզադյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զրույց, հողամաս 53
Հեռ. 093 32 83 28 Էլ. փոստ՝ arusshahzadyan@yahoo.com

5/17-279
«18» հոկտեմբեր 2022թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ

Հարգելի տիկին Շահզադյան.

Հայտնում եմ Ձեզ, որ 02.03.2022 թվականին «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի և «ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի միջի կնքված թիվ ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ-22/5-7 պայմանագրի շրջանակներում «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի աշխատակիցը Ձեր 093 32 83 28 հեռախոսահամարին հեռախոզանգ կատարելու միջոցով պատվիրել է մատակարարել 300 (երեք հարյուր) հատ ախտահանող հեղուկ, որը մինչ օրս Ձեր կողմից չի մատակարարվել:

08.09.2022 թվականին Ձեր վերը նշված հեռախոսահամարից ստացվել է լատինատառ SMS հաղորդագրություն, որով հայտնել եք, որ ապրանքը մեզ մոտ կլինի երկուշաբթի օրը, միաժամանակ ներողություն եք խնդրել ուշացման համար:

Սեպտեմբերի 8-ին հաջորդող երկուշաբթին եղել է 12.09.2022 թվականը, երբ, ըստ Ձեր SMS հաղորդագրության «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին արդեն իսկ ուշացումով պետք է մատակարարվեր պատվիրված ապրանքները, սակայն մինչ օրս ոչ միայն այդ ապրանքները չեն մատակարարվել «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին, այլ նաև «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի աշխատակցի զանգերը Ձեր կողմից թողնվում են անպատասխան:

Նկատի ունենալով վերոգրյալը 10.10.2022 թվականին Ձեր arusshahzadyan@yahoo.com էլ. փոստի հասցեին ուղարկված թիվ 5/17-273 գրությամբ առաջարկել ենք 2 (երկու) օրվա ընթացքում «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին մատակարարել դեռևս 01.09.2022 թվականին պատվիրված 300 (երեք հարյուր) հատ ախտահանող հեղուկը, սակայն մինչ օրս «ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին որևէ մատակարարում չի իրականացվել:

02.03.2022 թվականի թիվ ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ-22/5-7 պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1. կետի բ) ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագրի խախտելն էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 3 օրից ավելի:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1. կետի բ) ենթակետի դրույթներով սույնով ծանուցում ենք Ձեզ, որ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ն միակողմանի լուծում է 02.03.2022 թվականի թիվ ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՏՆՏ-22/5-7 պայմանագիրը:

«Քանաքեռ-Զեյթուն» ԲԿՓԲԸ-ի տնօրեն Մ. Միրզոյան